

ՇՈՒՇԱՆԻԿ ԳՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի
հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության
մշակման վարչության պետի տեղակալ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳՈՒՅՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում վերլուծվել են ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերությունների հետևանքով գույքին վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցման առանձնահատկությունները, քննարկվել է միայն ապրանքի թերության դեպքում առանց այլ գույքին վնաս պատճառելու վնասի հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորության հարցը, ներկայացվել է պատժիչ վնասի հատուցման դոկտրինը:

Հիմնարարներ- ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ, գույքին պատճառված վնաս, հատուցում, պատժիչ վնաս:

Քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանության, իրավահարաբերության մասնակցի կողմից իրավահարաբերության մյուս մասնակցի վրա ներգործելու արդյունավետ հնարավորությունների առկայության և դրանց կենսագործման հանգամանքով է մեծապես պայմանավորված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների (այսուհետ՝ Ապրանքներ) թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման համակարգի կենսունակությունը: Ըստ այդմ, անձին ընձեռվող պաշտպանության ցանկացած համակարգ նախ և առաջ պետք է լինի արդյունավետ, կենսունակ, ինչպես նաև համարժեք պաշտպանվող շահի էությանը և բնույթին:

Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում անձին տրվող իրավական պաշտպանության եղանակների արդյունավետությունը պայմանավորված է այդ հարաբերությունների բնույթից բխող, դրանց էությունը արտահայտող ներգործության համարժեք և համաչափ միջոցների կիրառման հետ: Այս տեսանկյունից պատահական չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով, ի թիվս քաղաքացիական իրավունքների պաշտպանության այլ եղանակների, վնասների հատուցումը որպես իրավունքների պաշտպանության ինքնուրույն եղանակ առանձնացնելը: Քաղաքացիական իրավունքների պաշտպանության այս եղանակի կարևորությունն առավել ընդգծվում է քաղաքացիական օրենսդրու-

թյանը վնասների լրիվ հատուցման սկզբունքի ամրագրմամբ:

Այս հանգամանքի հաշվառմամբ անհրաժեշտ է անդրադառնալ Ապրանքների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունների քննարկմանը: Սա պայմանավորված է նրանով, որ Ապրանքների թերությունների հետևանքով գույքին վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը պետք է իրականացվի սպառողական ոլորտին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ՝ պայմանավորված և՛ տվյալ գույքի կարգավիճակով, և՛ դրա նպատակային նշանակությամբ օգտագործման հանգամանքով: Ըստ այդմ, անհրաժեշտ է քննարկել հետևյալ հարցերը՝

1) արդյո՞ք ինքնին թերություն ունեցող Ապրանքի ձեռքբերումը կարող է դիտարկվել որպես անձի «գույքին» պատճառված վնասի առկայություն, թե՛ ոչ,

2) արդյո՞ք Ապրանքի թերության հետևանքով ցանկացած գույքին պատճառված վնասի հատուցումը կարող է իրականացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա (առանց մեղքի պատասխանատվություն, տուժողի և վնաս պատճառողի միջև պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքից անկախ պատասխանատվության և այլն).

Նախ և առաջ անդրադառնանք առաջին հարցին: Մենք հակված ենք այն տեսակետին, որ ՀՀ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «գույքին պատճառված վնաս» հասկացությունը պետք է բացառապես մեկնաբանվի որպես ձեռք բերված Ապրանքի թերության հետևանքով անձին պատկանող «այլ գույքին» պատճառված վնաս, իսկ թերություն ունեցող Ապրանքի առկայությունը (ձեռքբերումը) առանց այլ գույքին վնաս պատճառելու չի կարող հիմք հանդիսանալ վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար: Նշված եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ գաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «գույքին պատճառված վնաս» արտահայտությունը պետք է դիտարկվի արտապայմանագրային պատասխանատվության պայմանների՝ մասնավորապես հակաիրավական վարքագծի, դրա և վնասի միջև անհրաժեշտ պատճառահետևանքային կապի առկայության ողջամիտ տրամաբանության պահպանման տեսանկյունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման լույսի ներքո Ապրանքի թերության առկայությունը վկայում է Ապրանք վաճառողի (արտադրող, ծառայություն մատուցող, աշխատանք կատարող) հակաիրավական վարքագծի դրսևորման մասին, որը պատճառահետևանքային կապի տեսանկյունից պետք է հանգեցնի այլ վնասի պատճառմանը: Հակառակ պարագայում, արտադրական կամ այլ թերություն ունեցող Ապրանքի առկայությունը որպես գույքին պատճառված վնաս որակելը կհանգեցնի արտապայմանագրային պատասխանատվության պայմաններից՝ հակաիրավական վարքագծի, դրա հետևանքով պատճառված վնասի նույնացմանը և պատճառահետևանքային կապի բացակայության պայմաններում վնասի հատուցում տրամադրելու հնարավորությանը:

Բացի այդ, հարկ է նշել, որ պայմանագրով Ապրանք ձեռք բերելու պարագայում դրա թերության առկայությունը (հայտնաբերումը), որպես կանոն, վկայում է պայմանագրով Ապրանքի որակին կամ այլ հատկանիշներին առաջադրվող պահանջների խախտման մասին, և հետևաբար այս պարագայում գործում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրային պարտավորությունների կարգավորմանն ուղղված այն դրույթները, որոնք կապված են գույքի որակի կամ դրա այլ հատկանիշների հետ:

Ուշադրության է արժանի այն, որ եվրոպական երկրների օրենսդրությամբ հատուկ շեշտադրվում է այն գաղափարը, որ միայն թերություն ունեցող Ապրանքի ձեռքբերումը չի կարող հիմք ծառայել

արտապայմանագրային պատասխանատվություն նախատեսող դրույթների հիման վրա վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար¹: Ամերիկյան իրավական համակարգում այս հարցն իր լուծումը ստացել է դատական նախադեպերի միջոցով: Օրինակ՝ East River Steamship Corp. v. Transamerica Delaval Inc գործով դատարանը մերժել է վնասի հատուցման պահանջը, նշելով, որ արտադրողը արտապայմանագրային հարաբերությունների շրջանակում չի կրում ապրանքի՝ ինքն իրեն վնասելը կանխելու պարտականություն, և նման վեճերի լուծման դեպքում իրավական պաշտպանության պատշաճ միջոցը պայմանագրային իրավունքն է²:

Այժմ անդրադառնանք այն հարցի քննարկմանը, թե՛ արդյո՞ք Ապրանքի թերության հետևանքով ցանկացած գույքին վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը կարող է իրականացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա: Այս հարցի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եվրոպական երկրների մեծ մասի օրենսդրությամբ արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերի հիման վրա գույքին պատճառված վնասի հատուցումը թույլատրվում է այն դեպքում, երբ նման գույքի կարգավիճակն այնպիսին է, որ կապված չէ անձի մասնագիտական կամ ձեռնարկատիրական գործունեության հետ³: Սակավաթիվ երկրներ՝ (օրինակ Կորեան⁴, Ֆրանսիան⁵) դրսևորում են այլ մոտեցում, և գույքին պատճառված վնասի հատուցումը այստեղ պայմանավորված չէ այդ գույքի կարգավիճակով: Ըստ այդմ, գրականության մեջ քննարկվում է այն, թե արդյոք անհրաժեշտ չէ հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորություն նախատեսել նաև մասնագիտական կամ առևտրային գործունեության հետ առնչություն ունեցող գույքին վնաս պատճառելու դեպքում⁶: Այս մոտեցման դեմ արտահայտված կարծիքները գերակշռող են գրականության մեջ, և այդ կապակցությամբ նշվում է, որ այլ՝ մասնագիտական կամ առևտրային գործունեության հետ կապված գույքին պատճառված վնասի դեպքում անձը կարող է պահանջել վնասի հատուցում պայմանագրի կամ վնասի հատուցումը կարգավորող այլ դրույթների հիման վրա⁷: Մեր կարծիքով, նշված հարցին լիարժեք պատասխան տալու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կարևորագույն հանգամանքները:

Նախ, արտապայմանագրային պատասխանատվություն սահմանող նորմերի հիման վրա վնաս պատճառած անձի առանց մեղքի պատաս-

խանատվությունը (որն առավել խստացված է) կարող է վրա հասնել, իսկ վնասի հատուցման պահանջը բավարարվել միայն այն պարագայում, երբ պահպանված է այնպիսի կարևորագույն նախապայման, ինչպիսին՝ սպառողի կողմից Ապրանքները ի սկզբանե բացառապես անձնական կամ համանման այլ օգտագործման համար ձեռք բերելը և ըստ այդ նպատակի օգտագործելն է: Սա իր հերթին, որպես կանոն, ենթադրում է սպառողական նպատակով ձեռքբերված Ապրանքի օգտագործում այնպիսի միջավայրում, որը անմիջականորեն կապված չէ անձի մասնագիտական կամ ձեռնարկատիրական գործունեության հետ: Այլ կերպ ասած՝ սպառողական նպատակով Ապրանքի ձեռքբերումը ենթադրում է որոշակի միջավայրում դրա օգտագործման ռեժիմի առանձնահատկություն, ինչպես նաև այն միջավայրի (գույքի) կարգավիճակի առանձնահատկություն, որտեղ տեղադրվել է կամ որում օգտագործվում է Ապրանքը:

Բացի այդ, գույքին պատճառված վնասի հատուցումը այդ գույքի կարգավիճակով չպայմանավորելը կարող է հանգեցնել Ապրանք վաճառողների (արտադրողների, ծառայություն մատուցողների, աշխատանք կատարողների) անսահմանափակ պատասխանատվության: Նշվածը հիմնավոր է նաև այն տեսանկյունից, որ վնասի հատուցման ինստիտուտը տրամաբանական շղթայով կապված է սպառողական ոլորտում Ապրանք վաճառողներին (արտադրող, ծառայություն մատուցող, աշխատանք կատարող) առաջադրվող հիմնական պարտականության էության հետ, որը հանգում է նրան, որ Ապրանք վաճառողը պետք է ապահովի շրջանառության մեջ դրված Ապրանքների համապատասխանությունը անվտանգության նվազագույն չափանիշներին, որպեսզի չստեղծվեն անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու ոչ ողջամիտ ռիսկեր: Հակառակ պարագայում, եթե վերջինս պատասխանատվություն կրի նաև բիզնես միջավայրում (այդ թվում՝ մասնագիտական) Ապրանքի անվտանգ գործածության համար, ապա այդ պատասխանատվությունը կկրի անսահմանափակ, անկանխատեսելի բնույթ:

Իրականացված վերլուծության հաշվառմամբ՝ գտնում ենք, որ Ապրանքների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասը կարող է հատուցվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա այն դեպքում, երբ վնաս է պատճառվել այն գույքին, որը, որպես կանոն, անմիջականորեն կապված չէ անձի մասնագիտական կամ ձեռնարկատիրական գործունեության հետ: Անհրաժեշտ է նաև

նշել, որ «որպես կանոն» չափանիշի ամրագրումը նշանակում է, որ հնարավոր չէ իսպառ բացառել այն դեպքերը, երբ սպառողական նպատակով ձեռք բերված Ապրանքը օգտագործվի մասնավոր օգտագործման համար չնախատեսված միջավայրում, սակայն, այնուամենայնիվ, Ապրանքի օգտագործման ռեժիմից բխի, որ առկա չէ էական խզում Ապրանքի և դրա օգտագործման միջավայրի միջև: Այսինքն՝ ցանկացած գործով անհրաժեշտ է ինքնուրույն գնահատման առարկա դարձնել Ապրանքի թերության հետևանքով գույքին պատճառված վնասի հատուցման հարցը՝ պարզելով սպառողական նպատակով ձեռք բերված Ապրանքի առնչությունը ձեռնարկատիրական կամ մասնագիտական միջավայրի և ըստ այդմ պատճառված վնասի հետ: Ընդ որում, կարծում ենք դատարանները նման եզրահանգման գալու համար որպես ուղեցույց կարող են օգտագործել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ տվյալ գույքի ունեցած կարգավիճակը, թերություն ունեցող Ապրանքի և վնասված գույքի փոխկապվածության աստիճանը իրականացվող ձեռնարկատիրական, մասնագիտական գործունեության և դրանց արդյունքում հետապնդվող նպատակների միջև:

Վերլուծելով գույքին պատճառված վնասի հատուցման որոշ առանձնահատկությունների հարցը, կցանկանայինք անդրադառնալ նաև գույքին վնաս պատճառելու դեպքում բաց թողնված օգուտի հատուցման խնդրին: Բաց թողնված օգուտի հատուցման կանոնների ճիշտ կիրառումը կարևոր է ոչ միայն տուժողի շահերի պաշտպանության, այլև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) իրավական դիրքորոշումներին, դրանց համահնչության ապահովման տեսանկյունից: Սա պայմանավորված է նրանով, որ վնասի՝ այդ թվում բաց թողնված օգուտի հատուցման հարաբերությունները սերտորեն փոխկապակցված են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի հետ: Արձանագրության 1-ին հոդվածի լայն կիրառությունը տարբերությամբ իրավահարաբերությունների նկատմամբ պայմանավորված է նրանով, որ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի շրջանակներում «տիրապետում» հասկացությանը տրվել է լայն մեկնաբանություն՝ ընդգրկելով ոչ միայն սեփականության իրավունքը, այլ գույքային իրավունքների մի ամբողջ շարք: Որպես «տիրապետում» են որակվել նաև այլ ակտիվները՝ այդ թվում այն պահանջները, որոնց իրացման կապակցությամբ հայցվորը կա-

որոշ է հիմնավորել, որ ունի օրինական սպասելիք⁹ :

Դելիկտային պարտավորություններից ծագող իրավունքները նույնպես հանդիսանում են «սեփականություն» Կոնվենցիայի իմաստով¹⁰ : ՄԻԵԳ-ը, մեկ այլ գործով, արձանագրել է, որ վնասի հատուցման պահանջը հանդիսանում է «ակտիվ», և հետևաբար «տիրապետում» Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով : Դատարանը, ըստ այդմ գտել է, որ գործով հայցվորները կարող էին ունենալ «օրինական սպասելիք», որ վթարով պայմանավորված վնասի հատուցման իրենց պահանջը կորոշվի դելիկտային իրավունքի նորմերին համապատասխան¹¹ : ՄԻԵԳ-ը արձանագրել է, որ «օրինական սպասելիքը» իր բնույթով պետք է կոնկրետ լինի, քան հասարակ հույսը, և պետք է հիմնվի իրավական դրույթի կամ իրավական այնպիսի ակտի հիման վրա, ինչպիսին դատական ակտն է¹² : «Պահանջը» կարող է Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով հանդիսանալ «սեփականություն», եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրացվել¹³ :

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի՝ այդ թվում բաց թողնված օգուտի հատուցման հարաբերությունները ևս կարող են դիտարկվել Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իրավակարգավորման լույսի ներքո այն դեպքում, երբ վնաս կրած անձը հիմնավորի, որ «օրինական սպասելիք» է ունեցել վնասի հատուցում ստանալու տեսանկյունից : Ըստ այդմ, օրինական սպասելիքը պետք է բավարարի իրացվելիության չափանիշին, իսկ սա նշանակում է, որ վնասի՝ այդ թվում բաց թողնված օգուտի հատուցման պահանջ ներկայացնելիս կարելի է խոսել «օրինական սպասելիք»-ի առկայության մասին, երբ առկա է քաղաքացիական շրջանառության մասնակցի իրավունքների խախտման արդյունքում վրա հասնող անբարենպաստ հետևանքը՝ վնասը, այլապես հակառակ պարագայում օրինական սպասելիքը չի դիտարկվի որպես իրացվելի :

Վերլուծելով բաց թողնված օգուտի հատուցման և Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի հարաբերակցության հարցը, առավել մանրամասն անդրադառնանք Ապրանքների թերությունների հետևանքով գույքին վնաս պատճառելու դեպքում բաց թողնված օգուտի հատուցման խնդրին : Այս հարցի շուրջ մասնագետների շրջանում արտահայտվել են տարբեր տեսակետներ՝ որոշ հեղինակներ գտնում են, որ սպառողը անխտիր բոլոր դեպքերում ունի բաց թողնված օգուտի

հատուցման իրավունք, իսկ հեղինակների մյուս խումբը դրա հատուցումը պայմանավորում են միայն որոշակի պայմաններով¹⁴ :

Օրինակ՝ Յա.Պարցիյը, անդրադառնալով Ռ-Ռ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի նախկին խմբագրությանը¹⁵ նշում է, որ սպառողին հասցված վնասը կարող էր հատուցվել միայն իրավական վնասի մասով¹⁶ : Վ. Բոգդանը, անդրադառնալով Ռ-Ռ նշված օրենքով «սպառող» հասկացության հետագա փոփոխությանը, որի արդյունքում «եկամուտ ստանալու հետ չկապված» լինելու պահանջը փոխարինվեց «ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված» լինելու պահանջով նշում է, որ այդ փոփոխության արդյունքում ճանաչվեց սպառողի՝ բաց թողնված օգուտի հատուցում պահանջելու իրավունքը¹⁷ : Յա. Պարցիյը իր հերթին սպառողի բաց թողնված օգուտի հատուցում պահանջելը պայմանավորում է եկամտի մեկանգամյա ստացման հանգամանքով և գտնում, որ այդ հնարավորությունը բացառվում է եկամտի պարբերաբար ստացման դեպքում¹⁸ :

Արտահայտված կարծիքները թերևս խոցելի են այնքանով, որ հեղինակները հստակ չեն մատնանշում այն հիմնական չափանիշը, որից ելնելով կարելի է որոշել բաց թողնված օգուտի հատուցման թույլատրելիությունը : Բացի այդ, անխտիր բոլոր դեպքերում, առանց որևէ չափանիշի առանձնացման սպառողի՝ բաց թողնված օգուտի հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորության ճանաչումը խնդրահարույց է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի և նույն օրենսգրքի 1058-րդ հոդվածների փոխհարաբերակցության ողջամիտ տրամաբանության պահպանման տեսանկյունից :

Ապրանքների թերությունների հետևանքով գույքին պատճառված վնասի դեպքում բաց թողնված օգուտի հատուցման հարցի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրինակ՝ ամերիկյան դատական պրակտիկայում բաց թողնված օգուտը պատճառահետևանքային կապի տեսանկյունից պետք է հանդիսանա անձին կամ գույքին պատճառած վնասի արդյունք, և այս պայմանը բավարարելու դեպքում միայն բաց թողնված օգուտը կարող է հատուցվել¹⁹ :

Եվրոպական երկրներում օրենսդրորեն հստակ չի շեշտադրվում իրական վնասից զատ նաև բաց թողնված օգուտի հատուցման հնարավորության վերաբերյալ, սակայն առկա չեն նաև նորմեր, որոնք հատուկ կբացառեն այդ հնարավորությունը : Այս հարցի պարզաբանման համար ուղենիշային կարող է լինեն Եվրոպական Միության արդարա-

դատության դատարանի Henning Veedfald v Arhus Amtskommune C-203/99 գործով արտահայտած դիրքորոշումը, որով դատարանը արձանագրել է, որ չնայած պետությունների օրենսդիր մարմիններին է վերապահված «վնաս» հասկացության հստակ բովանդակության սահմանման իրավասություն, այնուամենայնիվ, բացառությամբ ոչ նյութական վնասի, որի փոխհատուցումը կարգավորվում է բացառապես ազգային օրենսդրությամբ, վնասի մյուս տեսակների դեպքում տուժողին պետք է հասանելի լինի ամբողջական և պատշաճ հատուցման տրամադրումը: Դատարանը եզրահանգել է, որ անդամ պետությունները չեն կարող սահմանափակել նյութական վնասի այն տեսակների հատուցումը, որոնք առաջանում են անձին կամ վերջինիս գույքին վնաս պատճառելու արդյունքում²⁰: Դատարանի նշված դիրքորոշումը առանձնահատուկ է նրանով, որ դրանով շեշտադրվում է վնասների ամբողջական հատուցման գաղափարը: Այլ կերպ ասած՝ Ապրանքի թերության հետևանքով գույքին վնաս պատճառելու դեպքում վնասների՝ այդ թվում բաց թողնված օգուտի հատուցման հարցում չպետք է լինի որևէ սահմանափակում:

Ինչ վերաբերում է քաղաքացիական օրենսդրությամբ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում բաց թողնված օգուտի հատուցման խնդրին, ապա հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆում նշվում է անձի կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ՝ առանց տարանջատում դնելու իրական վնասի կամ բաց թողնված օգուտի միջև: Մենք կարծում ենք, որ վերը նշված պարագրաֆի դրույթներով ևս հնարավոր է անձի գույքին վնաս պատճառելու դեպքում իրական վնասից զատ պահանջել նաև բաց թողնված օգուտի հատուցում: Մեր եզրահանգումը պայմանավորված է հետևյալով՝

1. Քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված կարևորագույն գաղափարներից մեկը վնասների լրիվ հատուցումն է, իսկ արտապայմանագրային հարաբերություններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ խախտված իրավունքների վերականգնման ապահովման սկզբունքի լիարժեք իրացումը հնարավոր է վնասների լրիվ հատուցման գաղափարի հետ սերտ փոխկապվածության պարագայում:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունը հուշում է, որ այն դեպքերում, երբ հատուցման ենթակա է միայն իրական վնասը, քաղաքացիաիրավական համապատասխան նոր-

մում դրա վերաբերյալ կատարվում է ուղղակի նշում²¹:

Քաղաքացիական օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն օրենսգրքի բացառիկ թվով 4 հոդվածներում է (968.9 հոդվածի 1-ին, 1121-րդ հոդվածի 2-րդ, 1136-րդ հոդվածի 1-ին, 1137-րդ հոդվածի 2-րդ մաս) հատուկ շեշտադրվում ի թիվս այլ վնասների՝ նաև բաց թողնված օգուտի հատուցման վերաբերյալ, ինչը գուցե և նպատակ է հետապնդում առանձնահատուկ շեշտադրել բաց թողնված օգուտի հատուցման գաղափարը, սակայն, մեր կարծիքով առանց նման շեշտադրման էլ դա ենթադրվում է, քանի որ վնասների լրիվ հատուցման սկզբունքը արդեն իսկ իր արտացոլումն է ստացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 409-րդ և 1058-րդ հոդվածներում:

Այսպիսով, մենք գտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի դրույթների հիման վրա սպառողը Ապրանքի թերության հետևանքով գույքին պատճառված վնասի դեպքում կարող է ներկայացնել բաց թողնված օգուտի հատուցման պահանջ այն դեպքում, երբ բաց թողնված օգուտը առաջացել է այնպիսի գույքին վնաս պատճառելու արդյունքում, որն, որպես կանոն, նախատեսված է եղել մասնավոր օգտագործման համար, և եթե ապացուցվի, որ այդ գույքին վնաս պատճառելու արդյունքում անձը չի ստացել այնպիսի եկամուտներ, որոնց ստացման իրական հնարավորությունը և մտադրությունը առկա է եղել (բաց թողնված օգուտը կարող է արտահայտվել նաև Ապրանքի թերության հետևանքով գույքին վնաս պատճառելու արդյունքում դրա շուկայական արժեքի նվազեցմամբ):

Սա պայմանավորված է նրանով, որ սպառողական ոլորտի հարաբերությունների կարգավորմանն ուղղված ակտերի կիրառման գաղափարի հիմնաքարը Ապրանքի՝ սպառողական նպատակով ձեռքբերումը և օգտագործումն է, որն անուղղակիորեն ենթադրում է նաև նման Ապրանքի օգտագործում ոչ թե բիզնես միջավայրում, այլ ընտանեկան, տնային կամ համանման այլ միջավայրում: Հակառակ պարագայում վնաս պատճառած անձի պատասխանատվությունը կկրի անսահմանափակ բնույթ՝ հաշվի առնելով նաև վերջինիս առանց մեղքի պատասխանատվության սկզբունքը:

Քննարկելով Ապրանքների թերության հետևանքով վնասի հատուցման առանձնահատկությունների հարցը, ցանկանում ենք նաև որոշ անդրադարձ կատարել ոչ նյութական վնասի հատուցման խնդրին: Բանն այն է, որ անգլո-ամերիկյան իրավական համակարգում Ապրանքների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թերությունների հետևանքով պատճառված վնասի պարագայում նախատեսվում է պատժիչ վնասի (punitive damage) հատուցման հնարավորություն: Սա, ըստ էության, ոչ նյութական վնասի առանձնահատուկ տեսակ է՝ իր հետապնդած ուրույն նպատակներով և ֆունկցիաներով:

Պատժիչ վնասի (punitive damage) դոկտրինը (այսուհետ՝ Դոկտրին) անգլիական ընդհանուր իրավունքին բնորոշ հին դոկտրին է: Այն ճանաչում է ստացել Անգլիայում դեռևս 1278 թվականին: Հետագայում Դոկտրինը փոխառնվել է Ամերիկայի կողմից: 1851 թվականի դրությամբ Դոկտրինը արձատրվորվել է ընդունվել է ԱՄՆ-ում²², և դարձել է անգլո-ամերիկյան քաղաքացիական իրավունքի բաղկացուցիչ մասը²³:

Գրականության մեջ առանձնացվում են պատժիչ վնասի չորս հիմնական ֆունկցիա՝

1) պատժիչ, որն ուղղված է հակաիրավական վարքագիծ դրսևորած անձին պատժելուն,

2) զսպման, որը սատարում է ապագայում նման վարքագծի դրսևորումը վնաս պատճառած և մյուս անձանց կողմից,

3) փոխհատուցման, որն ուղղված է այն վնասների հատուցմանը, որոնք որպես նյութական վնաս չեն հատուցվում կամ այն փաստացի վնասների հատուցմանը, որոնք հայցվորը չի կարող ապացուցել²⁴,

4) իրավապահպան, որն արտահայտվում է նրանում, որ զգալի չափի պատժիչ վնասի նախատեսումը խթանում է տուժողների՝ որպես «մասնավոր փաստաբան» հանդես գալը, և ըստ այդմ նպաստում նաև իրավական նորմերի իրացմանը²⁵: Հարկ է նշել, որ Դոկտրինի կիրառությունը թե՛ տեսական, թե՛ պրակտիկ բնագավառում բազմաթիվ վեճերի տեղիք է տվել:

Այսպես, Դոկտրինի կիրառմանը դեմ հեղինակների խումբը նշում է, որ պատժիչ և զսպման ֆունկցիաները բնորոշ չեն քաղաքացիական իրավունքին, առկա չէ քաղաքացիական իրաբերություններում դրանց կիրառման անհրաժեշտություն: Վերջիններս նաև գտնում են, որ պատժիչ վնասի նախատեսումը կարող է հանգեցնել ոչ ցանկալի տնտեսապես հետևանքների Ապրանք արտադրողների և վաճառողների համար: Մյուս պատճառաբանությունն այն է, որ առանց մեղքի՝ պատասխանատվության սկզբունքի գաղափարը անհամատեղելի է Դոկտրինի հետ, քանի որ այս դեպքում պետք է ապացուցվի վնաս պատճառողի մեղքը:

Այս տեսակետը չկիսող հեղինակների մեկ այլ խումբ իրենց հերթին նշում են, որ քաղաքացիական

իրավահարաբերություններին ևս բնորոշ են դրսևորած վարքագծի համար անձին պատժելու որոշակի տարրեր: Վերջիններս գտնում են, որ զսպման գործառույթը արդյունավետ չի գործում, երբ արտադրողները գիտակցում են, որ ստացված շահույթը գերազանցում է դատական կամ վնասի հատուցման հետ կապված իրենց կրած ծախսերը, և հետևաբար վերջիններիս առավել ձեռնտու է հատուցել պատճառված վնասները, քան փոխել իրենց գործարար պրակտիկան: Մեղքի և Դոկտրինի անհամատեղելիության տեսակետի կապակցությամբ հեղինակները նշում են, որ Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու հարաբերություններում մեղքը արտահայտվում է թերություն ունեցող Ապրանքի առկայությամբ: Այլ կերպ ասած՝ արտադրողը կամ վաճառողը «մեղավոր» են այն բանի համար, որ շրջանառության մեջ են դրել այնպիսի Ապրանք, որն առկա թերության պատճառով չի համապատասխանում հասարակության համար ընդունելի անվտանգության և որակի պահանջներին²⁷:

Մեզ համար առավել ընդունելի է հեղինակների երկրորդ խմբի մտտեցումը, քանի որ վնասների հատուցման հիմնական ֆունկցիան ոչ միայն պետք է դիտարկվի բացառապես փոխհատուցման գործառույթի, այլ նաև կանխարգելիչ (հակաիրավական վարքագիծ դրսևորելու դեպքում բացասական հետևանքների նախատեսման և դրանց կիրառման հնարավորության), պատժիչ (հանրային շահերի պաշտպանության) գործառույթների արդյունավետ իրացման տեսանկյունից: Սա պայմանավորված է նաև այն պարզ իրողությամբ, որ հասարակական հարաբերությունների զարգացման յուրաքանչյուր փուլում ներգործության միջոցների համակարգը պետք է վերանայվի, որպեսզի համարժեք լինի պաշտպանվող շահի էությանը, ինչպես նաև կատարված իրավախախտման բնույթին, դրա վտանգավորությանը:

Արտասահմանյան երկրների դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատժիչ վնասը հատուցվում է հիմնականում այն գործերի շրջանակում, որոնցով պարզվում է, որ՝

1) առկա է եղել ընդհանուր տեղեկացվածություն Ապրանքի հնարավոր վտանգի մասին,

2) ընթացքի մեջ գտնվող դատավարությունից զատ Ապրանքի թերության պատճառով այլ անձանց նախկինում ևս պատճառվել է վնաս,

3) Ապրանքի թերության վերացման կամ հասարակությանը Ապրանքի թերության մասին տեղեկացնելու հարցում նկատվել է հապաղում, ձգձգ-

գում,

4) ապացուցվել է, որ Ապրանքի այլընտրանքային նախագծումը տնտեսապես առավել պիտանի է: Ընդ որում, պատժիչ վնասը սովորաբար հատուցվում է այն դեպքում, երբ առկա են վկայակոչած երկու կամ ավել դեպքերի համակցություն²⁸:

Մենք այն տեսակետին ենք, որ պատժիչ վնասի նախատեսումը ոչ միայն կարող է հետապնդել վնաս պատճառողին պատժելու և ապագայում համանման դեպքերը ինչպես վնաս պատճառողի, այնպես էլ այլ անձանց կողմից կանխելու նպատակ (կանխարգելիչ ֆունկցիա), այլև լուրջ դերակատարում ունենալ քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավաչափ վարքագծի խթանման, հանրային իրավական շահերի պահպանության տեսանկյունից (պատժիչ ֆունկցիա): Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում պատժիչ վնասի հատուցման ինստիտուտի ներմուծումը տուժողի շահերի պաշտպանությունը կդարձնի առավել ռեալ, կնպաստի Ապրանքների պատշաճ որակի և անվտանգության ապահովմանը, և որպես վերջնական արդյունք լուրջ խթան կհանդիսանա սպառողների իրավունքների հասարակական պաշտպանության մեխանիզմների կատարելագործման համար: Կարծում ենք, որ Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու հարաբերությունների շրջանակում անձին պետք է ընձեռել ոչ նյութական վնասի հատուցման հնարավորություն որոշակի սահմանափակ դեպքերում, որպեսզի ապահովվի նաև դրա կիրառմամբ հետապնդվող նպատակի իրավաչափությունը և համարժեքությունը:

Ըստ այդմ, գտնում ենք, որ պատժիչ վնասի հատուցման հնարավորություն պետք է նախատեսվի այն դեպքում, երբ պարզվել է, որ չնայած այն հանգամանքին, որ Ապրանքը վնաս է պատճառել անձի կյանքին, առողջությանը կամ գույքին, վնաս պատճառողը «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իր պարտականությանը համապատասխան անհապաղ չի դադարեցրել նման Ապրանքի արտադրությունը (իրացումը) կամ միջոցներ չի ձեռնարկել այն շրջանառությունից անհապաղ հանելու համար, որի արդյունքում վնաս է պատճառվել այլ սպառողների կյանքին, առողջությանը կամ գույքին: Ընդ որում կարծում ենք, որ նման վնասի հատուցման չափը որոշելու համար դատարանի կողմից պետք է հաշվի առնվեն այնպիսի հանգամանքներ՝ ինչպիսիք են՝ պատճառված վնասի բնույթը, հակաիրավական վարքագծի դրսևորմամբ պայմանավորված հանրության համար հնարավոր վտանգը, այդ վտանգի վերաբերյալ վնաս պատճառած անձի իրազեկվածության մակարդակը, հակաիրավական վարքագծի դրսևորման տևողությունը, վնաս պատճառած անձի գործելակերպը նման վարքագիծ դրսևորելուց հետո, հակաիրավական վարքագիծ դրսևորելուց հետո վերջինիս ձեռնարկած միջոցները:

¹ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Council Directive 85/374/EEC of 25 July 1985 “On the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products”, Official Journal of the European Communities, L.210, 1985, N 07/08:
² Տե՛ս, Sawaya, Danielle. “Not Just for Products Liability: Applying the Economic Loss Rule Beyond Its Origins”, Fordham L. Rev., 2014, N 83, էջ 1086, էջ 1093:
³ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Council Directive 85/374/EEC of 25 July 1985 “On the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products”, Official Journal of the European Communities, L.210, 1985, N 07/08:
⁴ Տե՛ս, Kim, Chan Jin. “The Korean Product Liability Act”, Korean J. Int’l & Comp., 2005, L.33:47, էջ 112:
⁵ Տե՛ս, Green Paper “Liability for Defective Products, Commission of the European Communities”, 1999, էջ 32:
⁶ Տե՛ս, նույն տեղում, էջ 32:
⁷ Տե՛ս, Report from the Commission on the Application of Directive 85/374 on Liability for Defective Products, 2001, էջ 25:

www.journal.lawinstitute.am

⁸ Այդ թվում՝ բաժնետոմսերից բխող իրավունքները, արտոնագրերը, կենսաթոշակ ստանալու իրավունքը, արբիտրաժային հատուցումները, վարձավճարի իրավունքը, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հետ կապված իրավունքները:

⁹ Տե՛ս, Grgiæ Aida, Zvonimir Mataga, Matija Longar and Ana Vilfan. “The Right to Property under the European Convention on Human Rights”, Council of Europe, 2007, Handbook N 10, էջ 7:

¹⁰ Տե՛ս, Կարապետյան Ն.Ա., Սեփականության անձեռնմխելիության սկզբունքը քաղաքացիական իրավունքում., ատեն., Երևան, 2010, էջեր՝ 27-28:

¹¹ Տե՛ս, Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium, Գանգատ N 17849/91, 20 նոյեմբեր 1995 թվականի վճիռ, կետ 31:

¹² Տե՛ս, Case of Kopecký v. Slovakia, Գանգատ N 44912/98, 28 սեպտեմբեր 2004 թվականի վճիռ, կետ 49:

¹³ Տե՛ս, Burdov v. Russia, Գանգատ N 59498/00, 7 մայիս 2002 թվականի վճիռ, կետ 40:

¹⁴ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Богдан В. “Гражданско-правовые способы защиты прав потребителей в сфере торговли и услуг”, Юрист, 2003, N 7, հասանելի է՝ <https://www.lawmix.ru/comm/3874> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

¹⁵ Սպառող էր դիտարկվում այն քաղաքացին, ով ձեռք է բերում Ապրանքներ անձնական, ընտանեկան և համանման այլ կարիքների համար, որոնք կապված չեն եկամուտ ստանալու հետ:

¹⁶ Տե՛ս, այս հեղինակի կարծիքը Богдан В. “Гражданско-правовые способы защиты прав потребителей в сфере торговли и услуг”, Юрист, 2003, N 7, հասանելի է՝ <https://www.lawmix.ru/comm/3874> հղումով, 03.04.2018 թվականի դրությամբ:

¹⁷ Տե՛ս, նույն տեղում:

¹⁸ Տե՛ս, Парций Я.И. “Комментарий к Закону “О защите прав потребителей””. М., 1997, հասանելի է՝

<https://www.lawmix.ru/commlaw/1133> հղումով՝ 03.04.2018 թվականի դրությամբ:

¹⁹ Տե՛ս, Sawaya, Danielle. “Not Just for Products Liability: Applying the Economic Loss Rule Beyond Its Origins”, Fordham L. Rev., 2014, N 83, էջ 1075:

²⁰ Տե՛ս, Henning Veedfald v Arhus Amtskommune, 10 մայիս 2001 թվականի վճիռ, գործ C-203/99:

²¹ Օրինակ 464-րդ հոդված 3-րդ մաս, 1040-րդ հոդված 4-րդ մաս, 1037-րդ հոդված, 597-րդ հոդված 3-րդ մաս, 690-րդ հոդված և այլ դեպքերում օրենսդրորեն հստակ սահմանվում է միայն իրական վնասի հատուցման մասին:

²² Տե՛ս, Schuster, Richard D. “Punitive Damages Awards in Strict Products Liability Litigation: The Doctrine, the Debate, the Defenses”, Ohio St. LJ, 1981, N 42, էջեր՝ 771-772:

²³ Տե՛ս, Բեքմեյզյան Գ.Հ., ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ոչ նյութական վնասի հատուցման մի շարք հարցերի շուրջ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 197:

²⁴ Տե՛ս, Owen, David G. “Punitive Damages in Products Liability Litigation”, Michigan Law Review, 1976, N 74.7, էջ 1296:

²⁵ Տե՛ս, Schuster, Richard D. “Punitive Damages Awards in Strict Products Liability Litigation: The Doctrine, the Debate, the Defenses”, Ohio St. LJ, 1981, N 42, էջեր՝ 773-776:

²⁶ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Wertheimer, Ellen. “Punitive damages and strict products liability: An essay in oxymoron”, Vill.L.Rev., 1994, N 39, էջ 506-523:

²⁷ Տե՛ս, Schuster, Richard D., նույն աշխատությունը, էջեր՝ 779-782:

²⁸ Տե՛ս, Schuster, Richard D., նույն աշխատությունը, էջ 774:

Շուշանիկ Գուկասյան

Заместитель начальника департамента развития антикоррупционной
и пенитенциарной политики министерства юстиции РА,
аспирант кафедры гражданского права юридического
факультета Ереванского государственного университета

РЕЗЮМЕ

*Особенности возмещения вреда, причиненного имуществу
вследствие недостатков товаров, работ и услуг*

В статье анализируются особенности возмещения вреда причиненного имуществу вследствие недостатков товаров, работ и услуг, обсуждается вопрос о возможности подачи иска о возмещении вреда в случае дефекта продукта без причинения вреда другому имуществу, представлена доктрина штрафных убытков.

Ключевые слова: продукты, работы, услуги, вред причиненный имуществу, компенсация, штрафные убытки.

Shushanik Ghukasyan

Ministry of Justice of RA
The Deputy Head of Anticorruption and
Penitentiary Policy Development Department
PhD student of the Chair of Civil Law of the
Faculty of Law of the Yerevan State University

SUMMARY

*Peculiarities of compensation for damage caused to property
by shortcomings of goods, works and services*

The article analyzes the peculiarities of compensation for damage caused to property by shortcomings of goods, works and services, the issue of possibility of filing a claim for compensation for damage in case of a product defect without causing damage to other property was discussed, the doctrine of punitive damages was presented.

Key words: products, works, services, damage caused to property, compensation, punitive damage.